

ՍՓՅՈՒՌՔԻ ԳԻՏՆԱԿԱՆՆԵՐԻ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆ

ԳԱԱ արտասահմանյան անդամների թվաքանակն ըստ գիտության ուղղությունների ու երկրների.

N	Երկիր	Մաթեմատիկական և տեխնիկական գիտություններ	Ֆիզիկա և աստղաֆիզիկա	Բնական գիտություններ	Քիմիա և երկրի մասին գիտություններ	Հայագիտություն և հասարակական գիտություններ	Ընդամենը
1	ՌԴ	8	5	10	9	8	40
2	ԱՄՆ	10	6	9	4	3	32
3	Ֆրանսիա	1	4	2	2	6	15
4	Գերմանիա		5	2			7
5	Մեծ Բրիտանիա	1		1	1		3
6	Իտալիա					1	1
7	Շվեդիա	1	1				2
8	Ճապոնիա			2			2
9	Կանադա	1		1			2
10	Ուկրաինա	1			1		2
11	Ավստրալիա		1	1			2
12	Պորտուգալիա					1	1
13	Իրան	1					1
14	Հունաստան	1					1
15	Բելառուս				1		1
16	Կորեա		1				1
17	Լիբանան					1	1
Ընդամենը՝		25	24	28	18	19	114

Համատեղ հետազոտությունների իրականացում և առաջարկներ

Կ.Լին (Կորեա) շարունակում է ակտիվ համագործակցությունը Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ու ԵՊՀ ԳԲՀ ռադիոֆիզիկայի և հեռահաղորդակցության ամբիոնի հետ: Նա ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող առաջատար հետազոտությունների աջակցության ծրագրի (2021-26թթ.) օտարերկրյա պաշտոնական գործընկերն է:

Ա.Պողոսյանը (ՌԴ) ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող «Հեռավար լաբորատորիաների հիմնադրման ծրագիր» մրցույթի արդյունքում (2022-27թթ.) ճանաչվել է գիտական թեմայի հաղթող: Հետազոտությունն իրականացվելու է Ա.Նալբանդյանի անվ. քիմիական ֆիզիկայի ինստիտուտի հետ համատեղ:

Ա.Մինասյանը (Ավստրալիա) համագործակցում է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի հետ միկրոալիքային ֆոտոնիկ ազդանշանի ինտեգրված մշակման աշխատանքներում:

Լ.Բուզանը (ՌԴ) սերտ համագործակցում է Ֆիզիկական հետազոտությունների ինստիտուտի պինդ մարմնի ֆիզիկայի լաբորատորիայի հետ նանոգրաֆենային կլաստեր- ների ուսումնասիրության շրջանակում:

Ֆ.Մկրտչյանը (ՌԴ) Կենդանաբանության և հիդրոէկոլոգիայի գիտական կենտրոնի հետ շարունակում է Սևանա լճի էկոլոգիական գործընթացների մոդելավորման համակարգի, լճի երկրաէկոլոգիական վիճակի ու մարդածին գործոնների ազդեցության ապագա հետևանքների հաշվարկման ուսումնասիրությունները:

Ռ.Միրզոյանը (ՌԴ) շարունակում է համագործակցել ԻԿՐԱՆԵՏ-Հայաստան միջազգային կազմակերպության գիտաշխատողների հետ «MAGIC» պատկերային մթնոլորտային չերենկոլյան դիտակների համակարգով տարբեր գործընթացների ուսումնասիրություններում:

Ա.Սեդրակյանը (Գերմանիա) համագործակցում է Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանի հետ, կամավոր հիմունքներով եղել է «Տիեզերական կոմպակտ օբյեկտներ և հարաբերական ձգողականություն» բաժնի արտաքին ղեկավարը:

Վ.Սաքանյանը (Ֆրանսիա) շարունակում է համագործակցությունը «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի հետ: Նա ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող ծրագրի գիտական խորհրդատուն է: Կենտրոնում ներդրել է կետային մուտագենեզի տեխնոլոգիան, նրա ղեկավարությամբ իրականացվել են մի շարք փորձնական աշխատանքներ՝ բնագավառի նոր մեթոդների կիրառմամբ: Սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիայի աշխատանքներին նպաստելու նպատակով Վ.Սաքանյանը պարբերաբար տրամադրել է թանկարժեք նյութեր:

Գ.Անտրանիկյանը (Գերմանիա) սերտորեն համագործակցում է «Հայկենսատեխնոլոգիա» ԳԱԿ-ի սպիտակուցային տեխնոլոգիաների լաբորատորիայի հետ, արդյունքում տպագրվել է 3 հոդված ազդեցության բարձր գործակից ունեցող շտեմարաններում (Q1 և Q2): Նրա մասնակցությամբ ներկայացվել է ծրագիր, որը ֆինանսավորելու է Գերմանիայի կրթության և

հետազոտությունների դաշնային նախարարությունը (BMBF), որին կմասնակցեն նաև կենտրոնի աշխատակիցները:

Ա.Դարզին (Մեծ Բրիտանիա) Հայաստանի ազգային մրցունակության հիմնադրամի հոգաբարձուների խորհրդի ու Հայաստանի գիտության և տեխնոլոգիաների հիմնադրամի (FAST) խորհրդի անդամ է, շարունակում է համագործակցությունը ՀՀ առողջապահական կառույցների հետ, մեծ ներդրում ունի «Ավրորա» մարդասիրական մրցանակաբաշխության աշխատանքներում:

Տ.Դանիելյանը (Ֆրանսիա) աջակցում է Երկրաբանական գիտությունների ինստիտուտի և Լիլի համալսարանի միջև համագործակցությանն ասպիրանտական թեզի հետազոտությունների շրջանակում: Ինստիտուտի աշխատակիցներն այցելել են Լիլ համալսարան, տպագրվել է հոդված բարձր վարկանիշ ունեցող Geobios ամսագրում: Նա Ա.Թախտաջանի անվ. բուսաբանության ինստիտուտի ասպիրանտի համադեկավար է, յուրաքանչյուր տարի Ֆրանսիայում ասպիրանտը կատարելու է 6-ամսյա հետազոտական աշխատանքներ: Տ.Դանիելյանը նաև ԲԿԳԿ կողմից ֆինանսավորվող ծրագրի համադեկավար է:

Ս.Ղազարյանը (Մեծ Բրիտանիա) շարունակում է համագործակցությունը Մաշտոցի անվ. Մատենադարանի վերականգնման ու պահպանության բաժնի, Փորձաքննությունների ազգային բյուրոյի և Մ.Սարյանի թանգարանի հետ: Համատեղ նախագծի շրջանակում Լոնդոնում կատարվել է Մ.Սարյանի օգտագործած պիգմենտների մանրադիտակային հետազոտություն: Նրա թեման ԲԿԳԿ կողմից ֆինանսավորման է երաշխավորվել, ինչը հնարավորություն է ստեղծում Հայաստանում Օրգանական և դեղագործական քիմիայի գիտատեխնոլոգիական կենտրոնի հետ հիմնել համատեղ նոր լաբորատորիա:

Ա.Ղազարյանը (ՌԴ) համագործակցում է Արվեստի ինստիտուտի հետ, նա «Արվեստագիտական հանդեսի» խմբագրական խորհրդի անդամ է, ինստիտուտի հետ համատեղ տպագրել է «Նոր-Նախիջևանի հայկական գաղութի արվեստը» կոլեկտիվ մենագրությունը:

Ա.Խոջամիրյանի (Գերմանիա) նախաձեռնությամբ Ա.Ալիխանյանի անվ. ազգային գիտական լաբորատորիայի ԱԱԳԼ-Բելլե2 խմբի հետ իրականացվել է լայնածավալ ծրագրի տեսական մասի նախագծում:

Մասնագետների պատրաստում և վերապատրաստում: Արտասահմանյան անդամները հնարավորինս աջակցում են Հայաստանի երիտասարդ մասնագետների պատրաստմանն ու վերապատրաստմանը, նրանց նորարարական մտքի խրախուսմանը, մի շարք ասպիրանտների գիտական ղեկավարներ և համադեկավարներ են:

Կարեն ու Արմեն Քոչարյանները (ԱՄՆ) Ն.Քոչարյանի անվան ամենամյա միանվագ դրամաշնորհ են տրամադրում ԵՊՀ ֆիզիկայի ֆակուլտետի 2 ուսանողի լավագույն մագիստրոսական աշխատանքի համար:

Վ.Գրեգորյանի անվան (ԱՄՆ) ամենամյա կրթաթոշակ է սահմանվել երիտասարդ արևելագետների ու պատմաբանների համար «Ավրորա» մարդասիրական նախաձեռնության կողմից:

Հ.Փանոսյանի նախաձեռնությամբ ԱՐՓԱ-ն կազմակերպում է երիտասարդ մասնագետների համար նորարարության ամենամյա մրցույթ, որի նպատակն է խրախուսել նորարական միտքն ու խթանել նրա զարգացումը:

Ա.Մինասյանը հիմնել է «Արամ և Շերի Մինասյան հիմնադրամը», որը նախատեսում է դրամական աջակցություն ցուցաբերել ասպիրանտների նշարունակելու հետազոտություններն էլեկտրոնային, համակարգչային տեխնիկայի, ռադիոֆիզիկայի կամ ֆիզիկայի ոլորտներում: Այս տարի մրցանակը ստացել է Ռադիոֆիզիկայի և էլեկտրոնիկայի ինստիտուտի ասպիրանտ Ա.Ստեփանյանը:

Ա.Սեդրակյանն ու Վ.Համբարձումյանի անվ. Բյուրականի աստղադիտարանն ավարտել են Volkswagen հիմնադրամի կողմից ֆինանսավորվող ծրագիրը, որին մասնակցել են աստղադիտարանի աշխատակիցները:

Վ.Սաքանյանը կարևոր դեր ունի երիտասարդ կադրերի պատրաստման ու որակավորման բարձրացման հարցում մոլեկուլային կենսաբանության ոլորտում:

2023թ. լրացավ արտասահմանյան անդամ Յու.Հովհաննիսյանի 90-ամյակը, որի շրջանակում իրականացվեց վարպետաց դաս Երևանի 7 դպրոցների ավելի քան 150 աշակերտի համար: Միջոցառման ժամանակ Յու.Հովհաննիսյանն ակադեմիայի գովասանագրեր ու խրախուսական նվերներ հանձնեց քիմիայի միջազգային օլիմպիադայում հաղթած աշակերտներին:

Համատեղ աշխատությունների հրատարակում: Արտասահմանյան անդամների ու ՀՀ ակադեմիական և բուհական համակարգերի գիտնականների համատեղ ուսումնասիրությունների հիման վրա հրատարակվել են գրքեր, հետազոտությունների արդյունքները տպագրվել են միջազգային հեղինակավոր հանդեսներում, Հայաստանի կենտրոնական պարբերականներում, զեկուցվել են բազմաթիվ միջազգային գիտաժողովներում:

Մասնակցությունը ՀՀ-ում կազմակերպվող գիտական և գիտագործնական միջոցառումներին: Արտասահմանյան անդամներն ակտիվորեն մասնակցել են ՀՀ-ում կազմակերպվող գիտական, գիտակազմակերպական միջոցառումներին: Նրանց ակտիվ համագործակցության շնորհիվ ավելացել է նաև միջազգային ճանաչում ունեցող գիտնականների (ոչ հայազգի) մասնակցությունը Հայաստանում

կազմակերպվող միջազգային գիտաժողովներին: Արտասահմանյան անդամներից շատերն ընդգրկված են ՀՀ գիտական կազմակերպությունների կառավարման մարմիններում, մասնագիտական խորհուրդների կազմերում ու գիտական հանդեսների խմբագրական կազմերում: Ա.Սեդրակյանը մասնակցել է "The Modern Physics of Compact Stars and Relativistic Gravity" գիտաժողովի կազմակերպման աշխատանքների համակարգմանը, եղել է գիտաժողովի համանախագահ: Ա.Ղազարյանն Արվեստի ինստիտուտի հետ Դոնի Ռոստովում կազմակերպել է «Ճարտարապետություն և արվեստ. տեսությունից մինչև պրակտիկա» միջազգային գիտաժողովը:

Մասնակցությունը գիտական փորձաքննությանը

ԳԱԱ հայազգի արտասահման-յան անդամները ԲԿԳԿ փորձագետներ են, մասնակցում են բյուջետային ֆինանսավոր-ման համար մրցութային սկզբունքով կազմակերպվող գիտական հետազոտությունների նախագծերի (տեղական ու համատեղ միջազգային) հայտերի գիտական փորձաքննությանը:

Անդամակցություն միջազգային կազմակերպություններին ու պարգևներ

Ա.Մինասյանն ընտրվել է Եվրոպական գիտությունների ակադեմիայի անդամ գիտության և տեխնոլոգիայի մեջ ակնառու ավանդի համար: Ա.Տերյանն արժանացել է Մատենադարանի Մաշտոցի անվան մեդալի կատարած ներդրումների համար: Վ.Հարությունովն արժանացել է Ռուսաստանի կրթության և գիտության նախարարության պատվո կրծքանշանի գիտության ու կրթության որտում ունեցած ներդրման համար: